ԼՈՒՐԵՐ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՑ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՉԻՆՍՈՒՐԱՅԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Հունվարի 13-ին, Հիսուս Քրիստոսի անվանակոչության տոնին, արդեն իսկ երկար տարիներ ամրագրված ավանդույթի համաձայն, ուխտի Ս. Պատարագ մատուցվեց Չինսուրայի Ս. Հովհաննես հայկական եկեղեցում: Այն Արևմտյան Բենգալիա նահանգի երկրորդ ամենահին քրիստոնեական եկեղեցին է՝ կառուցված 1695 թ.: Ցավոք, այսօր այլևս հայեր չեն ապրում Չինսուրայում, և նմանատիպ ուխտագնացությունների միջոցով փորձ է արվում հայկական եկեղեցում կրկին աղոթք հնչեցնելու և ազդարարելու հայ քրիստոնյայի ներկայության մասին:

Օրվա պատարագիչն էր հնդկահայոց հոգևոր հովիվ և Կալկաթայի հայոց Մարդասիրական ճեմարանի կառավարիչ Տ. Օշական վրդ. Գյուլզյուլյանը, որին ընկերակցում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հարություն սրկ. Համբարձումյանը: Ս. Պատարագի ընթացքում Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ ընդգծելով Հնդկաստանում մեր նախնյաց թողած ժառանգության պահպանման և հնդկահայ գաղութի վերածննդի անհրաժեշտության մասին:

«Այսօր կրկին մեր նախնյաց օրինակով ուխտի ենք եկել հոյակերտ այս եկեղեցին՝ ևս մեկ անգամ հաղորդ դառնալու Սուրբ Պատարագին, աղոթելու մեր Եկեղեցու անսասանության և հնդկահայ գաղութի սակավաթիվ անդամների համար, քանզի այդ անդադրում աղոթքով են ապրել և զորացել հնդկահայերն իրենց հայրենիքից այդքան հեռու, և նույն աղոթք հրաշքն է, որ պահում է մեզ այս հյուրընկալ հողի վրա՝ դեռևս կառչած մեր արմատներին»,- նշեց Օշական վարդապետը:

Այս ուրախալի առիթով Կալկաթայի Ս. Նազարեթ հայկական եկեղեցուց դուրս էր բերվել նաև Ս. Հովհաննես Մկրտչի մասունքով Ս. Աջը, որով և Ս. Պատարագի ընթացքում կատարվեց անդաստան:

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգիստ եկեղեցու բակում թաղված հայորդիների հոգիների հանգստության համար, որից հետո ներկաները մոտեցան և համբուրեցին սրբազան մասունքը:

Ուխտագնացությանը մասնակցում էին Կալկաթայի եկեղեցական վարչության անդամները, հնդկահայեր և Մարդասիրական ճեմարանի սաները: